ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 սեպտեմբերի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

122
(3153)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ ՆՈՐ՝ ՅՈՒՂԱԼԻ ՊԱՇՏՈՆ ԿՈՒՆԵՆԱ

Երեկ՝երեկոյան, ազատումների եւ նշանակումների ժամ էր: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Աննա Մկրտումյանին ազատել էր առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Մկրտումյանը գործադիրում ավելի յուղալի պաշտոնում է նշանակվելու: Նրան առաջիկայում նշանակելու են Միասնական սոցիալական ծառայության նորանշանակ պետ, Արսեն Թորոսյանի ընկեր Արտյոմ Սմբատյանի տեղակալի պաշտոնում:

Թորոսյանի կադրային ջարդից հետո կարծես թե թափուր տեղերն արագ-արագ լրացվում են:

Մկրտումյանը տեսչությունում տեղակալ է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 19-ին. օրեր անց կլրանար նրա պաշտոնավարման 2 տարին:

Իսկ ինչ ունեցվածք է հասցրել ձեռք բերել Աննա Մկրտումյանը: 2021 թվականին նա գնել է բնակարան եւ ավտոկայանատեղի Երեւանի Արաբկիր վարչական շրջանում:

2021թվականն այնքան բեղուն է եղել Մկրտումյանի համար, որ նույն տարում, բացի բնակարան եւ ավտոկայանատեղի գնելուց, նա ձեռք է բերել նաեւ 2014 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա:

Աննա Մկրտումյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2, 325 եվրո եւ գրեթե 1,6 մլն դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 4,5 մլն դրամ:

Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնից Մկրտումյանը ստացել է 11 մլն 393 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է եղել եւ ամբողջ տարվա միակ եկամուտը:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 17 մլն 572 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Նրա հանգստի համար ճանապարհածախսը կազմել է 2 մլն դրամ:

Անշարժ գույքը վերանորոգելու համար Աննա Մկրտումյանը հատկացրել է 2,5 մլն դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել արտախորհրդարանական ուժերի գործունեությունը 2026 թվականին Հայաստանում սպասվող համապետական ընտրություններին ընդառաջ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանը նշեց, որ դեռ վաղ է խոսել, թե ինչպես եւ ինչ մասնակցություն կունենան համապետական ընտրություններին: Էդմոն Մարուքյանը նշեց. «Մենք ընտրություններին պատրաստվում ենք նախորդ ընտրության հաջորդ օրվանից: Ոչ թե մանդատի կամ խորհրդարանում անպայման հայտնվելու օրակարգով ենք շարժվում, այլ մեր մոտեցումը հետեւյալն է. երկրում պետք է իշխանությունը փոխվի: Ընտրություններից սպասելիքս մեկն է՝2026 թվականին Հայաստանի վարչապետի անունը չպիտի լինի Նիկոլ Փաշինյան: Ուրիշ սպասելիք չունեմ»:

ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկանում է, որ Հայաստանի պետական պարտքը 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ 13 մլրդ 852 մլն 137 հազար ԱՄՆ դոլար է: Հուլիսին արդեն այս ցուցանիշը զգալի փոփոխություն է կրել եւ դարձել 14 մլրդ 98 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պարտքը՝6 մլրդ 943 մլն 296 հազար, իսկ ներքինը 6 մլրդ 908 մլն 842 հազար դոլար է: Հունիս ամսվա տվյալների համաձայն՝մեկամսյա կտրվածքով ՀՀ պետական պարտքն ավելացել է 116 մլն 520 հազար դոլարով: Ընդ որում՝արտաքին պարտքը 46 մլն 7 հազար դոլարով պակասել է, իսկ ներքինը ավելացել է 162 մլն 527 հազար դոլարով: 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ՀՀ պետական պարտքը 12 մլրդ 842 մլն 240 հազար դոլար էր, որից արտաքինը՝6 մլրդ 454 մլն 151 հազար, իսկ ներքինը՝6 մլրդ 388 մլն 88 հազար դոլար: Հարկ է նշել, որ Հայաստանի ընդհանուր պետական պարտքը 2024-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 12,157 մլրդ դոլար, որը մեկ տարի անց աճել է գրեթե 1 մլրդ դոլարով: Հարկ է նշել, որ դեռ 2018 թվականին կանխատեսում կար, որ Հայաստանի պետական պարտքը 2018 թվականի վերջին հնարավոր է հատի 7 միլիարդ դոլարի սահմանագիծը: Սակայն ՔՊ-ականների կառավարման 7 տարիների ընթացքում այն կրկնապատկվել է:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ իշխանության ներսում մի մեծ զանգված աշխատում է, որպեսզի ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը ՔՊ վարչության անդամ չդառնա: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ մեծ լարվածություն ու դժգոհություն կա Ավանեսյանի շուրջ, ու, կարելի է ասել, մի մեծ բանակ ամեն գնով ցանկանում է խոչընդոտել նրա ներկայությունը ՔՊ կազմում: Ի հեճուկս դրա՝Ավանեսյանն էլ շատ ակտիվ քարոզչություն է անում հօգուտ իրեն, մասնակցում է ՔՊ նախաձեռնող նիստերին եւ բոլոր այն միջոցառումներին, որտեղ ներկա է հատկապես Նիկոլ Փաշինյանը: Ըստ ՔՊ-ականների՝Ավանեսյանն իրենց հետ որեւէ ձեւով չի պայքարել հեղափոխության օրերին, շատ պասիվ է եղել ու իրավունք չունի ՔՊ վերնախավում լինելու: Բայց, կարծես թե, Ավանեսյանին հաջողվել է «գրավել» Փաշինյանին ու կանաչ ճանապարհ հարթել իր համար: Կհաջողվի՞ Ավանեսյանին այս իրավիճակում սեպտեմբերի 20-ին ընտրվել նոր վարչության կազմում, թե՞ ոչ. դժվար է ասելը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՊԱՀԱՆՋԱՏԵՐ ԵՆՔ ՀՀ-Ի ՈՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՈՒՄ», ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀԿ եւ ՀՅԴ կուսակցությունների անդամները երեկ Կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիա են իրականացնում: Ինչպես գիտենք, Հայաստան է ժամանել Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Մեյդար Քըլըչը, ում հանդիպումներ են օրակարգն իշխանությունների կողմից գաղտնի է պահվում:

Այցի նպատակը, ըստ հայտարարված լուրերի, Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների կարգավորումն է, սակայն ակնհայտ է, որ ի սկզբանե այս գործընթացն իրականացվում է Հայաստանի կողմից թուրքական նախապայմանների բավարարման համատեքստում՝ չհանգեցնելով իրական կարգավորման:

«Ժողովուրդ» օրաթերթը ակցիայի վերաբերյալ զրուցել է ՀՀԿ երիտթեւի նախագահ Հենրիխ Դանիելյանի հետ:

-Պարոն Դանիելյան, ո՞րն է այսօրվա հավաքի նպատակը եւ հիմնական ուղերձը:

-Ակցիայի հիմնական ուղերձը մեր խոսքն է՝ուղղված նաեւ միջազգային հանրությանը, որ նրանք եւս տեսնեն, որ այստեղ այսօր հավաքված են երիտասարդներ, որոնք ներկայացուցիչներն են 1915 թվականի Ցեղասպանության հիշատակը առաջ տանողների, պայքարողների եւ ջուրացողների: Այստեղ երիտասարդներ են, որոնք անմիջապես 1915 թվականի հետո տեղի ունեցած Ղարաքիլիսայի, Սարդարապատի ճակատամարտի կրողներն են: Այստեղ հավաքված մարդիկ կրողներն են այն արժեհամակարգի, որը մենք ունեցել ենք մինչեւ 2018 թվականը: Այսօրվա հավաքի ամփոփ միտքն այն է, որ մենք չենք ուրանալու Ցեղասպանությունը, չենք ընկրկելու եւ չենք սակարկելու Հայաստանի Հանրապետության եւ հայի շահը:

Մենք թույլ չենք տա, որ նորից խաբեն մեզ՝ասելով, թե խաղաղության կա այսօր: Փաշինյանն այժմ նոր՝ կրկնակապիտուլյացիա է անում: Ինչպե՞ս է դա դրսեւորվում: Այդ կապիտուլյացիան Պրահայում Արցախից հրաժարվելն է, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներից, գերիների հրաժարվելը: Փաշինյանը չունի իրավունք՝խոսելու պարտվողական քաղաքականությամբ, եւ մենք այսօր այստեղ ենք՝ ասելու, որ մենք պահանջատեր ենք Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության հարցում, եւ որ մեզ պետք է արժանապատիվ խաղաղություն, երբ Արցախը խաղաղ կլինի, բայց այնտեղ կլինեն հայեր, ոչ թե ադրբեջանցիներ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ 40 ՄԻԼԻՈՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) Ուկրաինային կիսատկացնի լրացուցիչ 40 միլիոն եվրո մարդասիրական ֆինանսավորում, մասնավորապես՝ ձմեռային ժամանակահատվածում նրա ենթակառուցվածքներին աջակցելու համար: Այս մասին ասվում է հրապարակված մամուլի հաղորդագրության մեջ:

«ԵՄ մարդասիրական գործընկերները կվերանորոգեն վնասված տները եւ կենտրոնները տեղահանված անձանց համար: Ֆինանսավորումը կներառի դրամական օգնություն, ջեռուցման սարքեր եւ արտակարգ ջեռուցման կետեր: Հատուկ ուշադրություն կդարձվի խոցելի խմբերին, ինչպիսիք են՝տարեցները, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք եւ տեղահանված ընտանիքները», - ասվում է փաստաթղթում:

Ընդհանուր առմամբ, Եվրամիությունը քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի միջոցով ուղարկել է ավելի քան 156 հազար տոննա մարդասիրական օգնություն, նշվում է հայտարարության մեջ:

ԲՏԱ ՆԱԽԱՐԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 12-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով բյուրոյի ավագ պաշտոնյա Բրենդան Հանրահանի գլխավորած պատվիրակությանը:

Նախարար Հայրապետյանը, ողջունելով պատվիրակության անդամներին, բարձր է գնահատել այցի կարեւորությունը՝ ընդգծելով, որ ՀՀ կառավարության համար Հայաստան-ԱՄՆ երկկողմ հարաբերությունների շարունակական զարգացումն ու ամրապնդումը ռազմավարական առաջնահերթություն են: Նախարարը նշել է, որ այցը դիտարկվում է որպես հարաբերությունների նոր որակի հաստատման կարեւոր քայլ:

Հանդիպման ընթացքում Մխիթար Հայրապետյանը վստահություն է հայտնել, որ պատվիրակության այցը մեծապես կնպաստի օգոստոսի 8-ի՝ ՀՀ եւ ԱՄՆ կառավարությունների միջեւ արհեստական բանականության եւ կիսահաղորդիչների ոլորտում նորարարական գործընկերության մասին փոխըմբռնման հուշագրով նախատեսված միջոցառումների արդյունավետ իրականացմանը: Նախարարի խոսքով՝ այս համագործակցությունը լայն հնարավորություններ է ստեղծում Հայաստանի տնտեսության զարգացման տեսանկյունից:

Իր խոսքում Բրենդան Հանրահանը նշել է, որ ՀՀ-ԱՄՆ փոխըմբռնման հուշագրի բովանդակությունը վկայում է այն մասին, որ տեխնոլոգիական ոլորտում առկա է երկկողմ համագործակցության մեծ ներուժ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է հարցերի լայն շրջանակ, մասնավորապես, արհեստական բանականության ուղղությամբ ներդաշնակ քաղաքականությունները, Հայաստանի կիսահաղորդիչների էկոհամակարգում ներդրումների իրականացումը եւ չիպերի նախագծման, նույնականացման եւ թեստավորման կարողությունների զարգացումը: Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստանում ամերիկյան վերազգային ընկերությունների ներգրավվածության ընդլայնման, ներդրումների խթանման, արտահանման ընթացակարգերի պարզեցման, գիտահետազոտական (R&D) նախագծերի իրականացման, Firebird ընկերության՝ ԱԲ տվյալային կենտրոնի համար նախատեսված ենթակառուցվածքի համար արտահանման թույլտվության տրամադրման վերաբերյալ հարցերի եւ գործող լուծումների բարելավման շրջանակ:

Հատուկ ուշադրություն է դարձվել կիբեռանվտանգության եւ տիեզերական ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաեւ տեխնոլոգիական ոլորտում Հայաստան-ԱՄՆ հարաբերությունների հետագա զարգացման հնարավոր այլ ուղղություններին:

ՕԿՈՒՊԱՑՎԱԾ ԱՐՑԱԽՈՒՄ ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԿԱՆԱՋԵՐԾՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Ադրբեջանի ականազերծման գործակալության (ANAMA) աշխատակիցները ձերբակալվել են օկուպացված Արցախի Քաշաթաղի շրջանում հասարակական կարգը խախտելու համար: Միջադեպը տեղի է ունեցել սեպտեմբերի 11-ին Քաշաթաղի կենտրոնում: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Նրանց նկատմամբ կազմվել են վարչական արձանագրություններ, եւ Լաչինի շրջանային դատարանը որոշել է 8 օրով վարչական կալանք կիրառել:

ԶԱԽԱՐՈՎԱՆ՝ ԵՐԵՎԱՆ–ԲԱՔՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ

Մոսկվան ակնկալում է, որ Երեւանը եւ Բաքուն գործնական քայլեր կձեռնարկեն «3+3» ձեւաչափով հանդիպման համար: Այս մասին ասել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք մեր հայ եւ ադրբեջանցի գործընկերներից գործնական քայլեր ենք ակնկալում՝ «3+3» ձաչափով երկրների արտաքին գործերի նախարարությունների ղեկավարների հաջորդ հանդիպման վայրի եւ ամսաթվերի վերաբերյալ արագ համաձայնեցման համար», - ասել է Զախարովան: Նրա խոսքով՝ 3+3 տարածաշրջանային համագործակցության հարթակը լավ հարթակ է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման եւ Հարավային Կովկասին վերաբերող այլ թեմաների քննարկման համար:

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ «ԹՐԱՄՓԻ ՈՒՂՈՒ» ՎՐԱ

Այո՛, «Թրամփի ուղու» վրա մաքսային ծառայությունը գործելու է, վերահաստատում եմ: Այս մասին ԱԺ-ում հայտարարեց ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանի հարցին: Մինասյանը մասնավորապես հարցրեց՝ արդյոք «Թրամփի ուղի»-ով գործելու է մաքսային համակարգ եւ նշեց, որ վերոնշյալ ուղու մասով բազմաթիվ մեղադրանքներ են հնչում եւ հստակության կարիք կա:

««Թրամփի ուղու» հետ կապված ես ինքս վերջին հարցազրույցներից մեկում պարզաբանում տվել եմ եւ նշվածը ենթադրում է մաքսային ծառայության առկայություն: Մեկ անգամ եւս վերահաստատում եմ, այո՛, մաքսային ծառայությունը այդտեղ գործելու է»,- ասաց Հակոբյանը:

Նրա խոսքով՝ ինչ վերաբերում է դետալներին, դրանք դեռ քննարկման առարկա են:

«Այնուամենայնիվ, մեր մաքսային քաղաքականությունը տոտալ է»,- ասաց ՊԵԿ նախագահը:

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՏՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը տեսակապի միջոցով մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հերթական նիստին:

Նիստի օրակարգում ընդգրկված էին վեց տասնյակից ավելի հարցեր, որոնք վերաբերում էին ԵԱՏՄ շրջանակներում անդամ պետությունների միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, մաքսային եւ տեխնիկական կանոնակարգերին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱԿ-Ի ԱԽ-Ն ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դատապարտել է Կատարի մայրաքաղաք Դոհայի ուղղությամբ Իսրայելի հարվածը, որի թիրախը պաղեստինյան ՀԱՄԱՍ խմբավորման բարձրաստիճան անդամներն էին: Այս մասին հաղորդվել է Խորհրդի կայքում:

«Անվտանգության խորհրդի անդամները դատապարտել են Դոհայի՝ գլխավոր միջնորդի տարածքին վերջերս կատարված հարվածները: Նրանք խոր ափսոսանք են հայտնել քաղաքացիական բնակչության շրջանում մահերի համար»,- հայտարարել են Անվտանգության խորհրդում: Բացի այդ, խորհուրդը շեշտել է «լիցքաթափման կարեւորությունը» եւ «համերաշխություն հայտնել Կատարին», միաժամանակ կոչ է արել շարունակել Կատարի, Եգիպտոսի եւ Միացյալ Նահանգների միջնորդությամբ իրականացվող դիվանագիտական ջանքերը՝ պատանդների ազատ արձակման եւ Գազայում խաղաղության հասնելու համար:

Նիստում Իսրայելի ներկայացուցիչը շեշտել է, որ Դոհայի վրա հարձակումն ուղղված է եղել ՀԱՄԱՍ-ի առաջնորդների դեմ, որոնք «օրինական քաղաքական գործիչներ, դիվանագետներ կամ ներկայացուցիչներ չէին», այլ հոկտեմբերի 7-ին Իսրայելի վրա հարձակման «ոգեշնչողներն ու կազմակերպիչները»:

ԱՄՆ ներկայացուցիչն էլ ընդգծել է, որ թեեւ Կատարի ռմբակոծությունը «չի նպաստում Իսրայելի եւ ԱՄՆ-ի նպատակների իրագործմանը», ՀԱՄԱՍ-ի վերացումը «արժանի նպատակ» է, եւ ահաբեկիչները «չպետք է ապագա ունենան Գազայում»:

ԼԵՀԱՍՏԱՆԸ ԿՓԱԿԻ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ

Ռուս-բելառուսական համատեղ՝ «Արեւմուտք-2025» զորավարժություններն անցկացվելու են սեպտեմբերի 12-16-ը՝ Լեհաստանի սահմանի մոտ: Ծրագիրը, ի թիվս այլ բաների, ներառում է միջուկային զենքի եւ «Օրեշնիկ» նոր հրթիռային համակարգի գործնական կիրառում՝ հայտնել է DW-ն: Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը զորավարժություններն անվանել է «ագրեսիվ իրենց ռազմական դոկտրինի առումով» եւ ընդգծել, որ դրանք ստեղծում են Սուվալկի միջանցքի գրավման իմիտացիա:

Սուվալկի միջանցքը Լեհաստանի եւ Լիտվայի տարածքներում գտնվող 65 կմ երկարությամբ նեղ սահմանային հատված է, որը Բելառուսը բաժանում է Ռուսաստանի Կալինինգրադի մարզից, Բալթյան երկրները կապում է ՆԱՏՕ-ի մնացած մասի հետ:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը պահանջել է, որ Լեհաստանը բացի Բելառուսի հետ սահմանը: Մոսկվան Վարշավային մեղադրել է «Արեւմուտք-2025» զորավարժությունների ֆոնին լարվածության սրման համար՝ խորհուրդ տալով մտածել հետեւանքների մասին եւ վերանայել որոշումը: Լեհաստանը պատասխանել է՝ ավելացնելով իր ռազմական ներկայությունը եւ ստանալով ՆԱՏՕ-ի դաշնակիցների աջակցությունը:

ԻՆՉ ՕՐԱԿԱՐԳՈՎ Է ԵԿԵԼ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՏՈՒԿ ԲԱՆԱԳՆԱՑ ՍԵՐԴԱՐ ՔԸԼԸՉԸ ԺԱՄԱՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Թուրքիայի՝ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ բանագնաց, դեսպան Սերդար Քըլըչը երեկ ժամանել է Հայաստան: Այս մասին հայտնել էր ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանը:

«Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանը Հայաստան-Թուրքիա սահմանին՝ Մարգարայի անցակետի մոտ, ողջունել է կարգավորման հարցերով Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչին»,- նշել էր Բադալյանը: Ժամանելուց հետո Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչը սոցցանցի իր էջում գրել է.

«Շնորհակալություն ջերմ ընդունելության համար: Ուրախ եմ կրկին հանդիպելու համար»:

Այցի շրջանակում նախատեսվում են մի շարք պաշտոնական հանդիպումներ մայրաքաղաք Երեւանում:

Մինչ Հայաստան ժամանելը, դեսպան Քըլըչը Իգդիր քաղաքում լրագրողների հետ զրույցում անդրադարձել է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հաղորդակցման նոր ուղիների ստեղծման կարեւորությանը: Մասնավորապես, նա ընդգծել է Զանգեզուրի միջանցքի ռազմավարական նշանակությունը:

«Այս հաղորդակցության ուղին կարեւոր է ոչ միայն Թուրքիայի եւ Հայաստանի համար, այլ նաեւ ամբողջ Կենտրոնական Ասիայի եւ թյուրքական հանրապետությունների դարպաս բացելու առումով: Մեր ցանկությունն է կարճաժամկետ հեռանկարում բացել այս ուղին եւ նպաստել Իգդիրի եւ Կարսի տնտեսությունների զարգացմանը», - նշել է Քըլըչը:

Նրա խոսքով՝ Թուրքիայի եւ Հայաստանի հատուկ ներկայացուցիչների միջեւ շարունակվում են աշխատանքները՝ ուղղված տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացմանը:

Դեսպանը նշել է, որ հայկական կողմը դրական է վերաբերվում սահմանների բացման հարցին, սակայն շեշտել է, որ անհրաժեշտ է նախապես ավարտել որոշ տեխնիկական աշխատանքներ՝ նախքան կոնկրետ նախագծերի գործարկումը:

Թուրքական կողմը Քըլըչի այցը դիտարկվում է որպես երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացում հերթական քայլ՝ կողմերի միջեւ երկխոսության եւ վստահության ամրապնդման համատեքստում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌԴ-Ի ԴԵՄ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ԵՄ-ն երկուշաբթի օրը կներկայացնի Ռուսաստանի դեմ նոր պատժամիջոցների փաթեթ: Այս մասին հայտնում են Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունից: «Սեպտեմբերի 15-ին Եվրամիությունը կներկայացնի նոր պատժամիջոցների փաթեթ, որը Դոնալդ Թրամփի Սպիտակ տուն գալուց ի վեր առաջին անգամ մշակվել է նրա հետ անմիջական համակարգմամբ», - նշել է գերատեսչությունը:

Նշենք, որ նոր պատժամիջոցների փաթեթը կարող է ազդել ռուսական բանկերի եւ էներգետիկ ընկերությունների վրա: Բացի այդ, այն կներառի ռուսական վճարային եւ քարտային համակարգի դեմ միջոցառումներ եւ նավթի առեւտրի լրացուցիչ սահմանափակումներ:

ՊԱՊԻԿՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը սեպտեմբերի 12-ին ընդունել է մի շարք երկրների՝ ՆԱՏՕ-ում հավատարմագրված դեսպանների:

Նախարար Պապիկյանը ներկայացրել է պաշտպանական բարեփոխումները եւ դրանց ընթացքում զինված ուժերի կերպափոխման գործընթացը՝ ընդգծելով այս ոլորտում ՆԱՏՕ-ի կարեւոր դերակատարումը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են Հայաստան-ՆԱՏՕ գործընկերության ընթացքին եւ զարգացման հեռանկարներին, ինչպես նաեւ տարածաշրջանային ու միջազգային անվտանգությանն առնչվող հարցեր:

ՊՈՂՈՍՅԱՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ Է

Հայաստանի քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը պաշտոնական այցով մեկնել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ մասնակցելու Համաշխարհային հանրային անվտանգության համագործակցության 2025 թվականի համագումարին:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից հայտնում են, որ Արթուր Պողոսյանը հանդիպել է ՉԺՀ-ում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վահե Գեւորգյանին:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ «ԶԱՊԱԴ 2025» ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ռուսաստանի եւ Բելառուսի «Զապադ 2025» համատեղ ռազմավարական զորավարժությունները մեկնարկել են այսօր (սեպ. 12)», - այս մասին հայտնել են ՌԴ ՊՆ-ից, փոխանցում է ՌԻԱ «Նովոստին»:

"«Ս.թ. սեպտեմբերի 12-ին մեկնարկել է Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի «Զապադ 2025» համատեղ ռազմավարական զորավարժությունը»,-ասված է հաղորդագրության մեջ:

Զորավարժությունները կանցկացվեն Ռուսաստանի, Բելառուսի, ինչպես նաեւ Բալթիկ եւ Բարենցի ծովերի զորավարժարաններում:

ՀԱՊԿ-ի, ՇՀԿ-ի եւ այլ գործընկեր պետությունների զորակազմերը հրավիրվել են մասնակցելու: Նշվում է, որ զորավարժությունները կկենտրոնանան Միութենական պետության դեմ ագրեսիայի հետ մղման եւ նրա տարածքային ամբողջականության վերականգնման վրա:

ԲԱԼԻՈՒՄ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐ ԵՆ

Բալիում հեղեղումների հետեւանքով զոհերի թիվը հասել է 18-ի, տուժել է 659 մարդ,այս մասին տեղեկանում է «ՌԻԱ Նովոստի» գործակալությունից:

Նշվում է, որ ըստ տեղական ԶԼՄ-ների՝ եւս երկու մարդ անհետ կորած է: Տարերային աղետների մասին տվյալների, տեղեկատվության եւ հաղորդակցությունների ազգային կենտրոնից հայտնել են, որ շուրջ 200 մարդ ստիպված է եղել լքել իրենց տները: Բալիի նահանգի կառավարությունը հաստատել է արտակարգ իրավիճակների հակազդման ժամանակաշրջանը, որը կտեւի մինչեւ 2025 թ. սեպտեմբերի 17-ը:

Ըստ տեղի իշխանությունների՝ սա Բալիում առաջին խոշոր հեղեղումն է վերջին 5-10 տարվա ընթացքում, թեեւ այս ամսին պետք է լիներ չոր սեզոն:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁ

ԱԱԾ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ԿԱ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ

ԱԱԾ-ն սեպտեմբերի 6-ին օպերատիվ տեղեկություններ է ստացել, որ 52-ամյա Ա. Ս.-ն, դժգոհ լինելով ՀՀ իշխանությունների կողմից վարած քաղաքականությունից, մի խումբ անձանց հետ, նախնական համաձայնությամբ, 2025թ. ընթացքում նախապատրաստել է զավթել իշխանությունը, այն է՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաեւ սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ կառավարության լիազորություններին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել սկսել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը:

Բացի դրանից, իրավապահները օպերատիվ տվյալներ են ձեռք բերել, որ Ա. Ս.-ն, չհամակերպվելով 44-օրյա պատերազմում որդու կորստի հետ, մի խումբ անձանց հետ, ատելության, անհանդուրժողականության եւ թշնամանքի շարժառիթով, 2025թ. ընթացքում նախապատրաստել են ՀՀ մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց սպանությունը, այն է՝ ապօրինաբար վերջիններիս կյանքից զրկելը, կապված նրանց պետական եւ քաղաքական գործունեության հետ, սակայն չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցավոր արարքի կատարումը:

ArmLur.am-ը դիմեց ՀՀ քննչական կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է բացահայտվել Արարատի մարզում: Ի պատասխան՝ կոմիտեից հայտնեցին, որ դեպքի առթիվ քննվող քրեական վարույթի շրջանակներում հանրային քրեական հետապնդում է հարուցվել մեկ անձի նկատմամբ՝

- Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (սպանությունը՝ այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով),
- 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը),
- 43-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ եւ 15-րդ կետերով (սպանության նախապատրաստությունը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կողմից, ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, սեռով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով),
- 43-419-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանությունը յուրացնելու նախապատրաստությունը):

Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ՝ ՓԱՐԱՔԱՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 12-ին խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 04:05-ի սահմաններում չինական արտադրության էլեկտրական ավտոմեքենան Արգավանդի խաչմերուկից դեպի Երեւան ընթանալիս, ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության նախկին ճանապարհային ոստիկանության հենակետի մոտ դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե էլեկտրասյանը ու բետոնե պաշտպանիչ պատնեշին:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 2 հոգի, որոնց առաջինն օգնության են հասել քաղաքացիները եւ ըստ քաղաքացիների հայտնածի՝ օպերատիվորեն ժամանած ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Երեւանի թիվ 1 հրշեջ-փրկարարական ջոկատի փրկարարներն ու շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը, տեղափոխվել են «Վաղարշապատ» բժշկական կենտրոն:

Բախման հետեւանքով երկաթե էլեկտրասյունը տապալվել ու փակել է դեպի էջմիածին տանող ճանապարհահատվածի մեծ մասը եւ բետոնե պատնեշն է շպրտվել: Վնասվել են նաեւ տապալված էլեկտրասյան վրա տեղադրված ինտերնետ կապի համար օգտագործվող մալուխները:

Օպերատիվորեն ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Բադալյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Կարեն Ավետիսյանի, վաշտի հրամանատարի տեղակալ Տիգրան Խուդանյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են պարեկները:

Վթարի մասին ՊԾ Երեւան քաղաքի գնդից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ օրվա հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վարորդի եւ վիրավորների ինքնությունը:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ ասում էին, որ վթարի պատճառը ճանապարհի թաց լինելն է եղել: Հրշեջ-փրկարարները այնուհետեւ կատարել են ճանապարհի լվացման աշխատանքներ:

Վթարից հետո ավելի քան 2 ժամ է պահանջվել, որպեսզի ժամանեին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության ներկայացուցիչները եւ կատարեին հոսանքազրկում: Ժամանել էին նաեւ «Երքաղլույս»-ի աշխատակիցները, ովքեր հայտնեցին, որ հոսանքազրկման աշխատանքներն ու էլեկտրասյան տեղափոխումը վթարի վայրից պետք է կատարի ՀԷՑ-ը:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վարորդը ենթարկվել է սթափության փորձաքննության, եղել է սթափ, իսկ վիրավորները կին եւ տղամարդ են, ովքեր զբոսաշրջիկներ են եւ «Զվարթնոց» օդանավակայանից վարորդը նրանց տեղափոխում էր հյուրանոցային համալիր:

ՀԵՏԱԽՈՒՋՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Սեպտեմբերի 10-ին Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ չվերթի հաշվառումից հետո ձերբակալվել է 31-ամյա մի օտարերկրացի:

Նա մայիսի 5-ից ՌԴ իրավապահների կողմից հետախուզվում էր իշխանության ներկայացուցիչի նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանք:

Նրա հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին եւ Դատախազությանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀՈՒՇԱՆՎԵՐԻ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

Ախուրյանի համայնքային ոստիկանները բացահայտեցին հուշանվերի գողության դեպքը: Սեպտեմբերի 10-ին՝ ժամը 22-ին, Համայնքային ոստիկանության Ախուրյանի բաժնում հաղորդում տված օտարերկրյա քաղաքացին հայտնել է, որ Գոգավանից Գյումրի տանող ճանապարհահատվածում գտնվող ռեստորանային համալիրի մոտակայքում՝ ծառի տակ թողած իրերի միջից գողացել են հուշանվեր սուրը:

Համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված արարքը կատարել է Հացիկ գյուղի 16-ամյա բնակիչը:

16-ամյա պատանին, գողոնը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն:

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Սեպտեմբերի 11-ին, խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 21:20-ի սահմաններում Արցախի պողոտայում թիվ 32 հասցեի մոտ բախվել են «Mercedes G» եւ Վազ «21-06» մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով, ըստ նախնական տեղեկությունների բարեբախտաբար տուժածներ չկան:

Բախման հետեւանքով «Մերսեդեսը» կողաշրջված վիճակում բախվել է ծառին:

Օպերատիվորեն ժամանել են ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երեւանի թիվ 2 հրշեջ փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ.

Հրշեջ փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, փակել գազաբալոնի փականը եւ տեղում իրականացնում են հերթապահություն:

Օպերատիվորեն ժամանել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Բադալյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Կարեն Ավետիսյանի եւ վաշտի հրամանատարի տեղակալ Տիգրան Խուդինյանի գլխավորությամբ.

Տարածքը սահմանազատել են պարեկները:

Վթարի փաստով ՊԾ Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակում փաստաթղթեր են կազմվում, որտեղ էլ պարզվում է վարորդների ինքնությունը:

Ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի պատճառներից մեկը եղել է այն որ «Մերսեդեսի» վարորդի նկատմամբ մեկ այլ ավտոմեքենա վթարային իրավիճակ է ստեղծել, ապա դեպքի վայրից հեռացել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 120 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆԻ ԴՊՐՈՑ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ Է ՏԱՐԵԼ, ՍԱԿԱՅՆ ՄԻՆՉ ՕՐՍ ԱՅՆ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՉԷ

Նոյեմբերյան համայնքի հեռավոր՝ սահմանամերձ Բարեկամավան գյուղի միջնակարգ դպրոցի երկարամյա տնօրեն Աստղիկ Ազատյանը մեր թղթակցին հայտնել է, որ ինքը մտահոգված է իրենց դպրոցի ձմռան ջեռուցման հարցով, վառելափայտը թանկ է՝ խորանարդ մետրը 27 հազար դրամ:

Այս ամռանը, երբ ինքը արձակուրդում է գտնվել, իրենց դպրոցում Տավուշի մարզպետարանն արեւային կայան է տեղադրել, սակայն ինքը չգիտի, թե որքան է դրա հզորությունը, այն կբավարարի՞ դպրոցը ձմեռը ջեռուցելու համար:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին սեպտեմբերի 1-ին հարցում ենք արել. «Տավուշի մարզպետարանի միջոցով Բարեկամավանի դպրոցի շենքում ո՞ր ծրագրով է արեւային կայան տեղադրվել, որքա՞ն է այդ կայանի հզորությունը, այն որքանո՞վ է բավարար՝ Բարեկամավանի դպրոցը ձմեռը ջեռուցելու համար»: Մարզպետարանից պատասխանել են. «Բարեկամավանի արեւային կայանը դեռեւս չի շահագործվում, տեղադրման աշխատանքները ընթացքի մեջ են»:

ԴԻԼԻՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԸ 3 ՏԱՐԻ ՆՈՐՈԳՎՈՒՄ Է, ՍԱԿԱՅՆ ՆՈՐՈԳՄԱՆ ՎԵՐՋԸ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ

2022 թվականի հոկտեմբերին սկսվեց Դիլիջանի մշակույթի պալատի հիմնանորոգումը: Աշխատանքները կատարում էր «Արտդիանշին» ընկերությունը:

Կազմակերպությունն այդ գործում թերացավ, ընկերության հետ պայմանագիրը խզեցին, այլ կազմակերպության հետ պայմանագիր կնքվեց: Դիլիջանի բնակիչները հայտնեցին, որ ներկայումս այդ շենքում նորոգման աշխատանքներ չեն կատարվում: Մշակույթի պալատում էր գործում քաղաքային գրադարանը: Գրեթե 3 տարի գրադարանի աշխատողները հարկադիր պարապուրդի են մատնված, նրանք այդ պարապուրդի համար աշխատավարձի երկու երրորդ մասն են ստանում՝ մոտ 50 հազար դրամ: Նրանք դժգոհ են, որ մշակույթի պալատի հիմնանորոգման վերջը չի երեւում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ Է ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ ՉՈՐՍ ԱՆՁ

Իրանի հյուսիս-արեւմտյան շրջանում գործող Հեղափոխական դատարանը մահապատժի է դատապարտել չորս անձի՝ Իսրայելի Մոսադ լրտեսական ծառայության հետ համագործակցելու եւ Թել Ավիվի ռեժիմին գաղտնի տեղեկություններ փոխանցելու մեղադրանքով:

Արեւմտյան Ատրպատականի նահանգի գլխավոր դատախազ Նասեր Աթաբատին հայտնել է, որ մեղադրյալները նկարահանել եւ տեսանկարահանել են Իսլամական Հանրապետության կարեւոր գաղտնի օբյեկտների կենտրոնները՝ այդ տվյալները փոխանցելով Իսրայելի հետախուզությանը:

Նրանց մեղադրանք է առաջադրվել նաեւ՝ հատուկ SIM քարտեր եւ հեռախոսներ ձեռք բերելու, Մոսադի գործակալների հետ գաղտնի կապ հաստատելու, ինչպես նաեւ Թեհրանում, Ուրմիայում, Շահրուդում եւ Իսֆահանում պայթյուններ եւ հրկիզումներ իրականացնելու համար:

Ըստ մեղադրանքի՝ այս անձինք մասնակցել են Իրանի ռազմական օբյեկտների, ամրոցների եւ կարեւոր հաստատությունների նույնականացման գործընթացներին՝ ի շահ Իսրայելի բանակի, եւ որպես փոխհատուցում ստացել են կրիպտոարժույթով վճարումներ:

Դատարանի կողմից ներկայացված փաստաթղթերը վկայում են, որ կա ուղիղ կապ Մոսադի եւ այդ անձանց միջեւ: Նրանք դատապարտվել են մահապատժի՝ ըստ «Սիոնիստական ռեժիմի թշնամական գործողությունների դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի:

Աթաբատին ընդգծել է, որ Իրանի դատական իշխանությունները վճռական եւ կանխարգելիչ քայլեր են ձեռնարկելու այն անձանց դեմ, ովքեր վտանգում են երկրի հանրային եւ ազգային անվտանգությունը՝ գործելով թշնամիների շահերի օգտին:

Նա հավելել է, որ Իրանի դատական համակարգը շարունակելու է անզիջում կերպով պաշտպանել 1979 թվականի Իսլամական հեղափոխության արժեքներն ու ազգային շահերը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՐՔԱՅԱԶՆ ՀԱՐԻՆ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ԿԻԵՎ

Երեկ Արքայազն Հարին անսպասելի այց է կատարել Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւ: Այցը հաջորդել է նրա՝ Մեծ Բրիտանիա կատարած ամենաշաբաթյա այցին, որի ընթացքում Հարին հանդիպել է իր հորը՝ արքա Չարլզ III-ին. սա նրանց առաջին անձնական հանդիպումն էր վերջին 19 ամիսների ընթացքում:

Հաղորդվում է, որ այցը կատարվել է ուկրաինական կառավարության հրավերով, իսկ Հարին իր Invictus Games հիմնադրամի միջոցով ծրագրում է ներկայացնել նոր նախաձեռնություններ՝ վիրավոր ուկրաինացի զինվորներին աջակցելու համար:

Հարին ինչպես շատ թագավորականներ, ներգրավված է տարբեր բարեգործական ծրագրերում՝ հատկապես զինվորականների աջակցման ուղղությամբ: 2014-ին նա հիմնեց Invictus Games միջազգային մարզական մրցաշարը՝ նվիրված վիրավորված վետերաններին ու զինծառայողներին: Նա այցելել է նաեւ այլ երկրներ՝ հանդիպելով վիրավորված զինվորների հետ, այդ թվում՝ Նիգերիայում իր կատարած շրջայցի ժամանակ:

Այս տարվա ապրիլին Հարին արդեն մեկ անգամ անսպասելի այցելել էր Ուկրաինա եւ Լվով քաղաքում հանդիպել պատերազմի մասնակիցներին:

Չորեքշաբթի օրը, մինչ Հարին դեռ Մեծ Բրիտանիայում էր, նրա գրասենյակը հայտնեց, որ նրա հիմնադրամը նվիրաբերում է 500,000 դոլար՝ աջակցելու Գազայի եւ Ուկրաինայի երեխաներին:

Բրիտանական թագավորական ընտանիքը բազմիցս հայտնել է իր աջակցությունը Ուկրաինային: Էդինբուրգի դքսուհի Սոֆին, նախորդ տարի այցելել էր Ուկրաինա՝ աջակցելու պատերազմական սեռական բռնություններից տուժածներին: Իսկ արքայազն Ուիլյամը 2023-ին այցելել էր ուկրաինական-լեհական սահման՝ հանդիպելու բրիտանացի եւ լեհ զինծառայողների հետ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Հայաստանը վերջին տարիներին հասել է նրան, որ իր հարաբերությունները Ռուսաստանի հետ իսկապես դարձել են գործընկերային:

RTVI-ին տված հարցազրույցում այս մասին ասել է Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը:

«Հիմա Ռուսաստանի հետ բոլորովին այլ հարաբերություններ են, իսկապես գործընկերային հարաբերություններ են: Ռուսաստանի ու Հայաստանի հարաբերությունները ոչ թե կրտսեր եղբայր-մեծ եղբայր հարաբերություններ են, այլ ուղղակի գործընկերային հարաբերություններ են: Սա այն է, ինչին մենք իրականում հասել ենք վերջին 4 տարիների ընթացքում»,- ասել է Խաչատուրյանը:

Խաչատուրյանի խոսքով՝ Երեւանում ցանկանում են, որ ռուս գործընկերները հաշվի նստեն Հայաստանի իշխանությունների ինքնուրույն որոշումների հետ:

«Հայաստանի իշխանությունն աշխատում է Հայաստանի բնակիչների, Հայաստանի Հանրապետության բարօրության, ծաղկման համար: Դրա համար հայկական կառավարությունը, իշխանությունը ինքնուրույն պետք է որոշի, թե ում հետ ինչպես առեւտուր անի, դիվանագիտական հարաբերություններ ունենա»,- նշել է ՀՀ նախագահը:

Վահագն Խաչատուրյանն անդրադարձել է նաեւ Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի այն հայտարարությանը, թե «Հայաստանը պետք է ընտրություն կատարի Եվրասիական տնտեսական միության եւ Եվրոպական միության միջեւ, քանի որ հնարավոր չէ միաժամանակ երկու աթոռի վրա նստել»: ՌԴ փոխվարչապետն այդ հայտարարությունը մի քանի անգամ տարբեր հարթակներում արել էր այն բանից հետո, երբ Հայաստանի խորհրդարանը Եվրամիությանն անդամակցելու գործընթաց սկսելու մասին օրենք ընդունեց:

ՀՀ նախագահն ասել է, որ Օվերչուկին է պետք հարցնել, թե ինչ նկատի ունի «երկու աթոռի վրա նստել» ասելով: «Ամեն դեպքում հիմա ոչ մեկ մեզ ոչինչ չի ասում, եւ մենք ոչինչ չենք խախտում: Մենք աշխատում ենք այն պայմաններով, որոնք կան ԵԱՏՄ-ի շրջանակներում: Այն պայմանները, որոնք տնտեսական առումով կան Եվրամիությունում, մենք դրանցով աշխատում ենք, եւ մինչ այս պահը որեւէ խնդիր չի եղել: Ընդհանրապես ի՞նչ կարիք կա հիմա այդ մասին խոսելու, ի՞նչ կարիք կա հարցն այդպես սուր դնելու: Ինչի՞ համար է Օվերչուկն այդ հարցն այլ ձեւով ներկայացնում Ռուսաստանի հանրությանը: Կան առեւտրային համաձայնություններ, կան որոշակի պայմանավորվածություններ: Դրանք աշխատո՞ւմ են, այո, աշխատում են»,- ասել է Վահագն Խաչատուրյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար, 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2025թ.-ի հունվար-հունիս ամիսներին Հայաստան այցելած զբոսաշրջիկների 36.5%-ը ժամանել են ԱՊՀ երկրներից: ԵՄ երկրներից ժամանածները կազմել են 13.0%, մնացած 50.5%-ը ժամանել է այլ երկրներց:

Զբոսաշրջիկների 34.5%-ը ժամանել են Ռուսաստանից, 7.4%-ը՝ Իրանից, 6.4%-ը՝ ԱՄՆ-ից, 3.4%-ը՝ Ֆրանսիայից, 2.7%-ը՝Գերմանիայից, 2.1%-ը՝Վրաստանից, 1.5%-ը՝ Իտալիայից, 0.8%-ը՝ Ուկրաինայից, 0.4%-ը՝Նիդերլանդներից եւ Կանադայից՝0.6%:

Զբոսաշրջիկների 56.9%-ը այցելել է հանգստի եւ ժամանցի, 1.3%-ը՝բուժման, 39.2%-ը՝գործնական եւ 2.6%-ը ժամանել է այլ նպատակներով:

Ավելին, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների 2025թ.-ի հունվար-հունիս ամիսներին Հայաստան ժամանել է 907,135 զբոսաշրջիկ: 2024թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ զբոսաշրջիկների թիվը նվազել է 39,027-ով կամ 4.1%-ով:

Մասնավորապես, ժամանած զբոսաշրջիկների 46.1%-ը կամ 418,264-ը տեղավորվել են հյուրանոցներում, ինչը 2024թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ աճել է 20.6%-ով: Մնացած 53.9%-ը կամ 488,871 զբոսաշրջիկը տեղավորվել են բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում եւ այլն: 2024թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 18.4% անկում:

Հայաստանից մեկնել են 748,331 զբոսաշրջիկ, ինչը 2024թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ աճել է 6.1%-ով:

Նրանցից 9,638-ը կամ 1.3%-ը օգտվել են զբոսաշրջային գործակալությունների ծառայություններից, ինչը 2024թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ նվազել է 47.5%-ով: Իսկ մնացած՝ 98.7%-ը կամ 738,693 զբոսաշրջիկը ճանապարհորդել են ինքնուրույն: 2024թ.-ի համադրելի ցուցանիշի համեմատ գրանցվել է 7.6% աճ:

ԴՐԱՄԻ ՓՈԽԱՐԺԵՔ

ՀՀ բանկերի կողմից սահմանված ՀՀ դրամի փոխարժեքները սեպտեմբերի 12-ի ժամը 10:50-ի դրությամբ հետեւյալն են.

Անկանխիկ

Անկանխիկ ԱՄՆ դոլարի առքի ամենաբարձր փոխարժեք՝ 382.00 դրամ (+0.00 դր.), վաճառքի ամենացածր փոխարժեք՝384.50 դրամ (+0.00 դր.):

Անկանխիկ Եվրոյի առքի ամենաբարձր փոխարժեք՝ 446.00 դրամ (+1.00 դր.) եւ վաճառքի ամենացածր փոխարժեք՝450.00 դրամ (+0.00 դր.):

Անկանխիկ Ռուբլու առքի ամենաբարձր փոխարժեք՝4.47 դրամ (+0.00 դր.), իսկ վաճառքի ամենացածր փոխարժեք՝ 4.57 դրամ (-0.03 դր.):

Կանխիկ

Կանխիկ ԱՄՆ դոլարի առքի ամենաբարձր փոխարժեք՝ 382.00 դրամ (+0.00 դր.), վաճառքի ամենացածր փոխարժեք՝ 384.50 դրամ (+0.00 դր.):

Կանխիկ եվրոյի առքի ամենաբարձր փոխարժեք՝ 446.00 դրամ (+1.00 դր.) եւ վաճառքի ամենացածր փոխարժեք՝ 450.00 դրամ (+0.00 դր.):

Կանխիկ ռուբլու առքի ամենաբարձր փոխարժեք՝ 4.48 դրամ (+0.00 դր.), իսկ վաճառքի ամենացածր փոխարժեք՝ 4.56 դրամ (-0.04 դր.):

Idram&IDBank

ՎՃԱՐԻ՛Ր ՀԱՃԻՎՆ Idram&IDBank-ՈՎ, ՍՏԱՑԻ՛Ր idcoin-ԵՐ

Սուրճի սիրելի բույրը, համեղ ընդմիջումներն ու ընկերական հանդիպումները այս աշնանը ստանում են նոր՝ «շահավետ երանգ»: Այլեւս ձեր ամենօրյա այցերը սրճարան կամ բարերում անցկացրած երեկոները միայն հաճելի հիշողություններ չեն լինի. դրանք կդառնան նաեւ idcoin-եր ստանալու հիանալի առիթներ:

Idram&IDBank հավելվածով QR վճարումներ կատարելու դեպքում ստանալու եք ակնթարթային idcoin-եր:

Ամբողջ աշուն՝ 2025թ. սեպտեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 30-ը ներառյալ, կատարելով QR վճարումներ Idram&IDBank հավելվածով սրճարաններում, ռեստորաններում եւ բարերում, կստանաք մինչեւ 1% ակնթարթային idcoin, իսկ յուրաքանչյուր օր 12:00-15:00 ընկած ժամանակահատվածում՝ մինչեւ 10% ակնթարթային idcoin: Արշավի շրջանակում մեկ հաճախորդին օրացուցային ամսվա ընթացքում տրամադրվում է հանրագումարային առավելագույնը 10,000 idcoin (հարկումից հետո):

«Մեր գործընկեր սրճարանների, ռեստորանների եւ բարերի ցանկը շատշատ մեծ է. վստահաբար՝ այնտեղ յուրաքանչյուրը կգտնի իր սիրելի ընդմիջման վայրը, համեղ սնվելու տեղը կամ լիցքաթափվելու համար լավագույն բարը: Այս արշավով ցանկանում ենք մեր հաճախորդների հաճելի ժամանցը ողջ աշուն ուղեկցել շահավետ տրամադրությամբ», - ասաց IDBank-ի էկոհամակարգի զարգացման եւ գործընկերների հետ համագործակցության բաժնի ղեկավար Գոհար Ղուկասյանը: Կուտակած idcoin-երը կարող եք օգտագործել Idram&IDBank հավելվածով հետագա QR վճարումների ժամանակ Հայաստանի բոլոր մարզերի շուրջ 25.000 վաճառակետերում (1 idcoin = 1 դրամ): idcoin-ը տրամադրվում է IDBank-ի կողմից: Արշավի մանրամասներին կարող եք ծանոթանալ բանկի կայքում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ 30 ՄԼՆ ԽՄ ՋՐԱՌ ԻՐԱԿԱՆԱՑԵԼ

Տարվա չոր եղանակով պայմանավորված՝ գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար առաջարկվում է Սեւանա լճից նախատեսված 170 մլն խմ ջրառն ավելացնել 30 մլն խմ-ով՝ այսպիսով իրականացնելով 200 մլն խմ ջրառ:

«Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծն ԱԺ արտահերթ նիստում ներկայացրեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցածքների նախարար Դավիթ Խուդաթյանը:

«Նախագծով առաջարկվում է 2025թ-ին Սեւանա լճից ոռոգման նպատակով ջրառի չափաքանակը 170 մլն խմ-ից ավելացնել մինչեւ 200 մլն խմ: Տեւական շոգ եւ չոր եղանակով պայմանավորված՝ Մարմարիկ, Հրազդան, Քասախ եւ Ազատ գետերում կտրուկ նվազել է ջրի հոսքը, եւ ջրապահանջը լրացնելու նպատակով ինչպես ջրամբարներից, այնպես էլ Սեւանա լճից իրականացվել են պլանավորածից վաղ՝ ջրբացթողումներ նախորդ տարվա համեմատ շուրջ 10 օր»,-ասաց Խուդաթյանը:

Այս տարվա սեպտեմբերի 10-ի դրությամբ հանրապետության համեմատաբար խոշոր ջրամբարների լցվածությունը կազմել է 225 մլն խմ, ինչը 2024թ նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է շուրջ 140 մլն խմ-ով:

«Մենք եւս՝ ինչպես բոլորը, մտահոգ ենք Սեւանա լճի պահպանության հարցով որպես ռազմավարական ջրային պաշար, սակայն Արարատյան դաշտի ինտենսիվ ոռոգվող հողատարածքներում այլ ջրաղբյուրների բացակայությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել կատարել նշված փոփոխությունը»,-վստահեցրեց նախարարը:

Նախագիծն ԱԺ նիստում քննարկվում է հրատապ ռեժիմով: Առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո երկրորդ ընթերցմամբ քննարկումը կկազմակերպվի 24-ժամյա ռեժիմով:

ԱԺ-Ն ՎԱՎԵՐԱՑՐԵՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Ազգային ժողովը վավերացրեց Հայաստանի եւ Ղազախստանի կառավարությունների միջեւ միգրացիայի ոլորտում համագործակցությունը խորացնող համաձայնագիրը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ղազախստանի Հանրապետության կառավարության միջեւ միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին օրենքի նախագիծը քվեարկությամբ ստացավ 94 կողմ, 1 ձեռնպահ ձայներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ղազախստանի Հանրապետության կառավարության միջեւ միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2024 թվականի ապրիլի 15-ին Երեւանում:

Համաձայնագրով պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ եւ արդյունավետ ընթացակարգեր միգրացիոն ոլորտի կարգավորման գործընթացների վերաբերյալ՝ ձգտելով ստեղծել իրավական հիմք երկկողմ համագործակցության համար:

Հիմնական ուղղությունները վիճակագրական, իրավական եւ գիտամեթոդական տեղեկատվության փոխանակումն է, կողմ պետությունների տարածքում գտնվող քաղաքացիների մասին տեղեկատվության փոխանակումը, փորձի փոխանակումը եւ գործնական օգնությունը միգրացիայի կառավարմանն առնչվող հարցերում, ինչպես նաեւ կողմ պետությունների քաղաքացիների իրավունքների եւ նրանց ընտանիքի անդամների բնակության իրավունքների պաշտպանության, բնակության համար թույլտվության ժամկետների ընթացքում արդյունավետ ընթացակարգեր սահմանելը, ինչպես նաեւ կողմ պետությունների տարածքում գտնվելու ընթացքում կացության հիմքեր ունեցող անձանց իրավական կարգավիճակի վերաբերյալ հարցերի քննարկումը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Animaneco Joinville 7-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ՝ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնը մասնակցել է Բրազիլիայի Ժոնվիլ քաղաքում անցկացված Animaneco Joinville 7-րդ միջազգային տիկնիկային թատերական փառատոնին:

Թատրոնը հանդես է եկել «Մատնաչափիկը» ներկայացմամբ՝ այն խաղալով երկու անգամ պորտուգալերենով:

Փառատոնի շրջանակում կայացել են մի շարք կարեւոր հանդիպումներ: Թատրոնի գործունեությամբ հետաքրքրվել են Արգենտինայի եւ Բրազիլիայի այլ միջազգային փառատոների ղեկավարներ, ձեռք են բերվել համագործակցության նախնական պայմանավորվածություններ 2026-2028 թվականներին կայանալիք փառատոների համար:

Բրազիլիայի Animaneco Joinville 7-րդ միջազգային տիկնիկային թատերական փառատոնին 24 թատերախումբ է մասնակցել ամբողջ աշխարհից, այդ թվում՝ Լատինական Ամերիկայից եւ եվրոպական առաջատար երկրներից:

Այցի շրջանակում Բրազիլիայի եւ Արգենտինայի հայ համայնքների առաջարկությամբ կազմակերպվել են ներկայացումներ Սաո Պաուլոյում եւ Բուենոս Այրեսում գործող հայկական դպրոցի երեխաների համար, ինչպես նաեւ անցկացվել են կրթական վարպետության դասեր՝ ստվերային տիկնիկների պատրաստման թեմայով:

ՄԱՐՔԱԿԱՆ

«ՄԵԿԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԷ». ՅԱՄԱԼԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Բարսելոնայի» եւ Իսպանիայի հավաքականի 18-ամյա վինգեր Լամին Յամալը խոստովանել է, որ երազում է նվաճել ոչ թե մեկ, այլ մի քանի «Ոսկե գնդակ»:

Ներկայումս այս հեղինակավոր անհատական մրցանակի տիրակալը «Մանչեսթեր Սիթիի» կիսապաշտպան Ռոդրին է:

«Ես չեմ երազում միայն մեկ «Ոսկե գնդակի» մասին, ես երազում եմ մի քանիսի մասին: Այդպես եմ ասում ընկերներիս: Դա հնարավոր է, եւ եթե ես չհասնեմ դրան, ուրեմն ինչ-որ բան սխալ եմ արել:

Բայց եթե երազանքս իրականություն դառնա, շատ երջանիկ կլինեմ: Իհարկե, առաջնահերթը թիմի հաղթանակներն են», - Յամալի խոսքերը մեջբերում է RMC Sport-ը:

Յամալը «Բարսելոնայի» սան է: «Կապտանռնագույնների» առաջին թիմի կազմում նա անցկացրել է 109 խաղ, խփել 27 գոլ եւ կատարել 37 գոլային փոխանցում:

ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՄՐՑԱՆԱԿ Է ՍՏԱՑԵԼ Gentleman Award–ՈՒՄ

Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագ, «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը պարգեւատրվել է իտալական Gentleman Award մրցանակաբաշխության 30-ամյակի ժամանակ, հայտնում է «Ներաձուրիների» պաշտոնական կայքը:

Gentleman մրցանակաբաշխության հոբելյանական 30-րդ թողարկումը, որը նվիրված է Fair Play-ին, կայացել է հեղինակավոր Scuola Militare TeuliՈ-ում: «Ինտերը» դարձել է երեկոյի գլխավոր հերոսը՝ արժանանալով մի քանի մրցանակի: Մրցանակակիրներն էին ակումբի նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրեն Ջուզեպե Մարոտան, փոխնախագահ Խավիեր Զանետին, ֆուտբոլիստներ Լաուտարո Մարտինեսը, Հենրիխ Մխիթարյանը, Կառլոս Աուգուստոն եւ Նիկոլո Բարելան:

«Ես երջանիկ եմ եւ հպարտ, ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր քվեարկել են իմ օգտին: Սա մեծ պատիվ է, եւ ես շատ շնորհակալ եմ: Այս մրցանակն արտացոլում է, թե ով եմ ես: Ես չեմ ձգտում այդպիսին լինել, դա պարզապես իմ պահվածքն է: Հնարավոր է, դա պայմանավորված է իմ բնավորությամբ, բայց դա ինձ չէ դատել», - ասել է Հենրիխ Մխիթարյանը:

ԺԱՄԱՆՑ

ՋՈՒՅԳԸ ՉԵՂԱՐԿԵԼ Է ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցավալի լուր Հոլիվուդի ամենագեղեցիկ զույգերից մեկի երկրպագուների համար. Նինա Դոբրեւը եւ Շոն Ուայթը այլեւս միասին չեն: Դերասանուհին եւ սնուբորդինգի եռակի օլիմպիական չեմպիոնը խզել են իրենց նշանադրությունը գրեթե մեկ տարի անց՝ ամուսնության առաջարկից եւ հինգ տարվա հարաբերություններից հետո:

Ինչպես հաղորդում է People-ը՝ հղում անելով զույգին մոտ կանգնած աղբյուրին, որոշումը փոխադարձ էր եւ հեշտ չէր նրանց համար: «Այն կայացվել է սիրով եւ միմյանց նկատմամբ խորը հարգանքով», - ասել է ներքին աղբյուրը: Դոբրեւի եւ Ուայթի պաշտոնական ներկայացուցիչները դեռեւս չեն մեկնաբանել իրավիճակը:

Վերջին անգամ Նինան եւ Շոնը միասին տեսել են օգոստոսի 31-ին Լոս Անջելեսում. նրանք ձեռք ձեռքի բռնած էին եւ բավականին երջանիկ տեսք ունեին: Սակայն սեպտեմբերի 7-ին դերասանուհին TIFF-ի կարմիր գորգին հայտնվեց առանց նշանադրության մատանու: Երկրպագուները նաեւ նկատել էին, որ նա ջնջել է նշանադրության լուսանկարով գրառումը իր սոցիալական ցանցի էջից, որը երկար ժամանակ ամրացված էր նրա էջում:

Հիշեցնենք, որ Ուայթը Նինային ամուսնության առաջարկ է արել 2024 թվականի հոկտեմբերին՝ Նյու Յորքի The Golden Swan ռեստորանում ռոմանտիկ ընթրիքի ժամանակ:

ՄԱՀԱՊԱՏԻԺՆԵՐ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՖԻԼՄԵՐ ԴԻՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հյուսիսային Կորեայի կառավարությունը ավելի ու ավելի է դիմում մահապատժի, այդ թվում՝ օտարերկրյա ֆիլմեր եւ հեռուստասերիալներ դիտելու եւ տարածելու համար բռնված մարդկանց նկատմամբ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է BBC-ն՝ վկայակոչելով ՄԱԿ-ի զեկույցը:

Բացի այդ, ըստ զեկույցի՝ ԿԺԴՀ-ն իր ժողովրդին ենթարկում է ավելի շատ հարկադիր աշխատանքի՝ միաժամանակ ավելի շատ սահմանափակելով նրանց ազատությունները:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գրասենյակը պարզել է, որ վերջին տասնամյակում Հյուսիսային Կորեան խստացրել է վերահսկողությունը «քաղաքացիների կյանքի բոլոր ասպեկտների» նկատմամբ:

«Այսօրվա աշխարհում ոչ մի այլ բնակչություն նման սահմանափակումների չի ենթարկվում», - նշում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների գրասենյակը՝ հավելելով, որ հսկողությունը դարձել է «ավելի լայնատարած», մասամբ՝ տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Վոլկեր Տյուրկը նշել է, որ եթե այս իրավիճակը շարունակվի, ապա հյուսիսկորեացիները «կենթարկվեն ավելի շատ տառապանքների, դաժան բռնաճնշումների եւ վախի, որին նրանք դիմացել են այդքան երկար»:

Զեկույցը հիմնված է վերջին 10 տարիների ընթացքում Հյուսիսային Կորեայից հեռացած մարդկանց հետ անցկացված ավելի քան 300 հարցազրույցների վրա: Զեկույցի հեղինակները պարզել են, որ ԿԺԴՀ-ում մահապատիժն ավելի հաճախ է կիրառվում:

2015 թվականից ի վեր ընդունվել է առնվազն վեց նոր օրենք, որոնք թույլ են տալիս կիրառել մահապատիժ: Մահապատժի ենթակա հանցագործություններից մեկը օտարերկրյա մեդիա բովանդակության, օրինակ՝ ֆիլմերի եւ հեռուստասերիալների դիտումն ու տարածումն է:

Երկրից փախուստի դիմած մարդիկ ՄԱԿ-ի հետազոտողներին ասել են, որ 2020 թվականից սկսած ավելի շատ մահապատիժներ են եղել օտարերկրյա բովանդակություն տարածելու համար: Նրանք նկարագրել են, թե ինչպես են այդ մահապատիժներն իրականացվում հրապարակայնորեն՝ մարդկանց մեջ վախ սերմանելու եւ օրենքը խախտելուց նրանց հետ պահելու համար:

Բացի այդ, փախուստի դիմած գրեթե բոլոր անձինք հայտնել են, որ սննդի պակաս ունեն, եւ օրական երեք անգամ սնվելը «շքեղություն է»:

2025 թվականի ՄԱԿ-ի զեկույցի համաձայն՝ Հյուսիսային Կորեայի տիրահռչակ քաղաքական բանտ-ճամբարներից առնվազն չորսը դեռ գործում են: Սովորական բանտերի բանտարկյալները եւս, ըստ հարցազրույցների մասնակիցների, ենթարկվում են խոշտանգումների:

ՄԱԿ-ը կոչ է անում, որ այս իրավիճակով զբաղվի Հաագայի Միջազգային քրեական դատարանը:

● *Սեպտեմբերի 24-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Կարեն Սարգսյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Սարգսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

● վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:

● Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:

● Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:

● Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Լիանա Գրիգորյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Աբովյան փողոցում

Մայրաքաղաքի կենտրոնի բնակիչները շատ մեծահոգի վերաբերմունք են ցուցաբերում թռչունների հանդեպ: Միայն թե լավ կլինի, որ ավելորդ աղբը չմնա փողոցի հենց կենտրոնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 8 +16 + 20
	Կոտայքի լեռներ	+ 3 + 8 +15 + 18
	Կոտայքի նախալեռներ	+10 + 13 +22 + 24
	Գեղարքունիք	+ 3 + 7 +16 + 19
	Լոռի	+ 6 + 9 +15 + 19
	Տավուշ	+ 7 + 11 +16 +19
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 7 +16 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 14 +21 + 25

	Արարատ	+13 + 16 +26 + 28
	Արմավիր	+11 + 15 +26 + 28
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 8 +18 + 22
	Վայոց ձորի նախալեռներ	+12 + 16 +25 + 28
	Սյունիքի հովիտներ	+14+ 18 +22 + 25
	Սյունիքի նախալեռներ	+8 + 12 +16 + 19
	ԼՂՀ	+13+ 17 +19 + 22
	Երեւան	+15 + 18 +22 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.9.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*